ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1952 Общественные науки

Ա. Ղանալանյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՌ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

1

Բազիսի և վերնաշենքի մարքս-լենինյան ուսմունքը, այդ ուսմունքի մեջ Ի. Վ. Ստալինի կողմից նրա «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատությամբ կատարված խոշոր ներդրումը կարևոր նշանակություն ունեն դրականության ու արվեստի, այդ թվում նաև ժողովրդական բանահյուսության գիտական ուսումնասիրության ու արժեքավորման համար։

Ի. Վ. Ստալինը ուսուցանում է, որ «Վերնաշենքը հասարակության քաղաքական, իրավական, կրոնական, գեղարվեստական, փիլիսոփայական հայացքներն են և դրանց համապատասխանող քաղաքական, իրավական և այլ հաստատությունները»[1]։ Ելնելով Մարքսի հայտնի գրույթից, որի համաձայն «Նյութական կյանքի արտադրության եղանակը պայմանավորում է ընդհանրապես կյանքի սոցիալական, քաղաքական և հոգևոր պրոցեսները»,[2] ընկեր Ստալինը նշում է, որ «Ամեն մի բազիս ունի իրեն համապատասխանող իր վերնաշենքը», որ՝ «Վերնաշենքը ծնունդ է տոնում բազիսից»։ Նա միաժամանակ ընդգծում է այն հանգամանքը, որ «Վերնաշենքն անմիջականորեն կապված չէ արտադրության հետ, մարդու արտադրական գործունեության հետ։ Արտադրության հետ նա կապված է միայն անուղղակի կերպով, էկոնոմիկայի միջոցով, բազիսի միջոցով»։ Վերնաշենքի ֆունկցիան, ըստ ընկեր Ստալինի, այն է, որ նա «հասարակությանն սպասարկում է քաղաքական, իրավաբանական, էսթետիկական ու այլ գաղափարներով»[3]։

Վերնաշենքի բնույթի ու էության ստալինյան վերոհիշյալ բնորոշումների հիման վրա կարելի է անվարան կերպով ասել, որ ժողովրդական բանահյուսությունը վերնաշենքային երևույթ է։ Նա հասարակական կեցությամբ պայմանավորված հասարակական գիտակցության ուրույն ձևերից մեկն է, որի դերն է յուրովի սպասարկել հասարակությանը՝ էսթետիկական գաղափարներով։ Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերավոր, գեղարվեստական ձևով արտացոլված է աշխատավոր ժողովրդի կյանքն ու պայքարը, նրա հույզերն ու մտորումները։

Մարքսիզմի կլասիկների կողմից դիցաբանությանը տրված բնութագրականը որոշ իմաստով կարելի է տարածել նաև ժողովրդական բանահյուսության վրա։

---

[1] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 10։

[2] «Համ Կ(բ)Պատմություն», համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 177։

[3] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 10, 13, 22, 82։

Իրենց մի շարք աշխատություններում, տարբեր առիթներով, Մարքսն ու Էնգելսը արձանագրել են, որ դիցաբանության համար նյութ է ծառայել ֆանտաստիկորեն արտացոլված ռեալ իրականությունը, բնության իրական երևույթները, կյանքում գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, որ ամենաանսանձ երևակայությունն անգամ յուրօրինակ և հրաշապատում պատկերներով արտացոլում է իր մեջ շրջապատի ռեալ իրականության տարրերը։

«...Մշուշային գոյացումները մարդկանց ուղեղում, նույնպես հանդիսանում են կենսական պրոցեսի՝ նյութական պայմանների հետ կապված անհրաժեշտ սուբլիմատները»,— գրել են Մարքսն ու Էնգելսը իրենց «Գերմանական ոդեոլոգիայի»[1] մեջ։

Սակայն, և՛ Մարքսի և՛ Էնգելսի կարծիքով բնությունն ու հասարակական կյանքը դիցաբանության մեջ բեկված չեն սովորական ձևով։ Տնտեսական զարգացման նախնական աստիճանը նրանց հտվաստմամբ նախապայման ու պատճառ է հանդիսացել վաղնջական ժամանակների մարդկանց համար՝ կեղծ, ոչ ճիշտ պատկերացումներ կազմելու բնության երևույթների մասին, իրեն՝ մարդու մասին, զանազան ոգիների, կախարդական ուժերի և այլնի մասին։ Այդ տեղի է ունեցել այն պատճառով, որ նույն այդ մարդկանց կողմից ստեղծված հասարակական հարաբերությունները և վերջիններիս ժամանակ գոյություն ունեցող արտադրողական ուժերը գերիշխել են նրանց վրա և այդ իսկ պատճառով՝ ընկալվել իբրև արտաքին անխորտակելի խորհրդավոր ուժեր։

Իր «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» գրքի առաջաբանում, խոսելով հունական դիցաբանության մասին, Մարքսը հետևյալ բնութագիրն է տալիս դիցաբանությանն ընդհանրապես։

«...Բնություն և հասարակական ձևեր, որոնք անգիտակցական գեղարվեստական եղանակով մշակված են արդեն ժողովրդի երևակայության միջոցով»[2]։

Նա միաժամանակ նախաղգուշացնում է, որ բնության ամեն մի պատահական անգիտակցական գեղարվեստական մշակում... դեռևս դիցաբանություն չէ, և որ «բնություն ասելով՝ հասկացվում է ամբողջ առարկայականը, հետևաբար՝ հասարակությունը ներառյալ»։

Նմանօրինակ ձևով դիցաբանությունը բնութագրված է նաև Էնգելսի մոտ։

Իր «Անտի-Դյուրինգի» մեջ նշելով, որ համեմատական առասպելաբանությունը դիտել է աստվածների երկակի բնույթը, բայց մեկնաբանել դրանք միակողմանիորեն՝ որպես բնական ուժերի արտացոլում, զանց առնելով նրանց սոցիալական բնույթը, Էնգելսը գրում է. «Յուրաքանչյուր կրոն ոչ այլ ինչ է, քան մարդկանց գլուխների մեջ այն արտաքին ուժերի ֆանտաստիկ արտացոլումը, որոնք իշխում են նրանց վրա առօրյա կյանքում, արտացոլում, որի մեջ երկրային ուժերը գերբնական ուժերի ձև են ստանում։ Պատմության սկզբում այդ արտացոլմանն են ենթարկվում, ամենից առաջ, բնության ուժերը. զարգացման ընթացքում տարբեր ժողովուրդների մոտ երևան են գալիս նրանց ամենաբազմազան և խայտաբղետ անձնավորումները... Բայց շուտով, բնության ուժերի շարքում, հանդես են գալիս նաև հասարակական ուժերը,—

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 17.

[2] Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 271։

ուժեր, որոնք հակադիր են մարդուն և իշխում են նրա վրա, մնալով նրա համար սկզբում, բնության ուժերի նման, նույնպես անհասկանալի, խորթ և օժտված տեսանելի բնական անհրաժեշտությամբ։ Ֆանտաստիկ կերպարները, որոնց մեջ առաջուց արտացոլվում էին միայն բնության խորհրդավոր ուժերը, այժմ ձեռք են բերում հասարակական հատկանիշներ և դառնում են պատմական ուժերի ներկայացուցիչներ։ Զարգացման հետագա աստիճանի վրա շատ աստվածների բնական և հասարակական հատկանիշների ողջ ամբողջությունը տեղափոխվում է մի ամենակարող աստծու վրա, որն, իրեն հերթին հանդիսանում է միայն վերացական մարդու արտացոլումը»[1]։

Դիցաբանության մեջ բնության երևույթների անգիտակցական գեղարվեստական յուրահատուկ մշակման մարքսյան վերոհիշյալ դրույթը իր խոսուն իլուստրացիան է գտել Էնգելսի «Լանդշաֆտներ» վերնագրով ուշագրավ հոդվածում։ Խոսելով ժողովրդական հավատալիքների և բանավոր ստեղծագործության տեղական լանդշաֆտի հետ ունեցած սերտ կապի մասին, Էնգելսն այդ կապակցությամբ գրում է.

«Էլլադան բախտ ուներ տեսնելու, թե ինչպես նրա լանդշաֆտի բնույթը գիտակցվում էր նրա բնակիչների կրոնի մեջ...

...Յուրաքանչյուր գետ պահանջում է իր ջրահարսները, յուրաքանչյուր պուրակ— իր անտառահարսները, և այսպես ահա կազմվել է հույների կրոնը։

...Միայն այն ժամանակվանից, երբ ես ծանոթացա հյուսիս-գերմանական տափաստանի հետ, ես իսկությամբ հասկացա Գրիմմների «Մտնկական հեքիաթները»։ Այդ համարյա բոլոր հեքիաթների վրա նկատելի է այն բանի կնիքը, որ նրանք ծնունդ են առել այստեղ, ուր գիշերվա վրա հասնելուն հետ չքանում է մարդկային կյանքը, և ժողովրդական երևակայության ահարկու անհեթեթ ստեղծագործությունները սավառնում են մի վայրի վրայով. որի անմարդաբնակությունը նույնիսկ պայծառ օրն էլ սարսափ է ազդում... Հռենոսի վրա կամ Շվաբիայում դուք չեք իմանա ժողովրդական հեքիաթների ծագման գաղտնիքը, այնինչ այստեղ ամեն մի ամպրոպային գիշեր,— ճաճանչափայլ ամպրոպային գիշեր... կայծակների լեզվով պնդում է այդ մասին»[2]։

Դիցաբանությանն իբրև հասարակական գիտակցության ձևերից մեկի, իբրև իդեոլոգիայի պատկերավոր, գեղարվեստական արտահայտության, որն արտացոլում է շրջապատի ռեալ իրականությունը, մարքսիզմի կլասիկների կողմից տրված վերոհիշյալ բնութագրականը իր սկզբունքային սաստով վերաբերում է նաև ժողովրդական բանահյուսության բոլոր մյուս ժանրերին ու ստեղծագործություններին։

Ժողովրդական բանահյուսության հուշարձանները, իբրև վերնաշենքային երևույթներ, հիանալի իլուստրացիա են հանդիսանում ընկեր Ստալինի այն դրույթի համար, ըստ որի «Վերնաշենքը արդյունք է մեկ դարաշրջանի, որի ընթացքում ապրում և գործում է տվյալ տնտեսական բազիսը։ Այդ պատճառով էլ վերնաշենքը երկար չի ապրում, այն լիկվիդացվում և անհետանում է տվյալ բազիսի լիկվիդացման և անհետացման հետ մեկտեղ»[3]։

Զափազանց ուսանելի են այս առումով Մարքսի մտքերը դիցաբանության,

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XIV, стр. 322—323.
[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. II, стр. 55—56.
[3] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 18։

ինչպես նաև էպոսի՝ հասարակական-տնտեսական զարգացման որոշ ձևերի հետ ունեցած կապի ու փոխհարաբերության մասին։

Ինչպես հասարակական բոլոր մյուս բազիսային և վերնաշենքային երևույթների բնութագրման ժամանակ, այնպես էլ դիցաբանության հասարակական-տնտեսական զարգացման որոշ ձևերի հետ ունեցած կապի ու փոխհարաբերության հարցում, հավատարիմ պատմական մատերիալիզմի սկզբունքներին, կլասիկները ցուցաբերել են կոնկրետ պատմական մոտեցում։ Նրանք որոշակի կերպով արտահայտել են դիցաբանության անցողիկ բնույթի դիալեկտիկական-մատերիալիստական տեսակետը։ Նրանց կարծիքով դիցաբանությունը հասարակական-տնտեսական զարգացման որոշակի աստիճանի արդյունք է։ Այն կարող է ծնվել ու գոյություն ունենալ միայն և միմիայն այն ժամանակ, երբ մարդը ամբողջապես ենթակա է բնության տարերային ուժերին։ Հենց որ նա տիրապետում է բնության ուժերին, վերանում է և դիցաբանության սնող հողը, դրա հետ միասին, վերանում է նաև այդ հողի վրա աճած դիցաբանությունը։

«...Մի՞թե հնարավոր է, որ բնության ու հասարակական հարաբերությունների այն ըմբռնումը, որը կազմում է հունական երևակայության և, հետևաբար, հունական արվեստի հիմքը, գոյություն ունենա սելֆակտորի, երկաթուղիների, լոկոմոտիվների ու էլեկտրական հեռագրի ժամանակ... Հնարավո՞ր է Աքիլեսը վառոդի ու կապարի դարաշրջանում։ Կամ, ընդհանրապես «Իլիականը» տպագրական մամուլի և տպագրական մեքենայի հետ միասին... Եվ մի՞թե անհրաժեշտաբար չեն անհետանում զրույցները, երգերն ու մուսաները, հետևաբար և վիպերգական բանաստեղծության համար անհրաժեշտ նախադրյալները տպագրական մամուլի երևան գալով»[1], հարցնում է Մարքսը իր «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» աշխատության վերոհիշյալ առաջաբանում, և անմիջապես պատասխանում հարցապնդման ձևով առաջ քաշած իր կարևոր դրույթին։

«...Յուրաքանչյուր դիցաբանություն հաղթահարում, նվաճում և ձևավորում է բնության ուժերը երևակայության մեջ ու երևակայության օգնությամբ. հետևաբար, այն չքանում է, երբ մարդս իրոք տիրապետում է բնության այդ ուժերին»[2]։

Մարքսիզմի կլասիկների կարծիքով հասարակական-տնտեսական զարգացման այն կացութաձևը, որի ժամանակ ստեղծվել ու գոյություն է ունեցել դիցաբանությունն իր վերոհիշյալ բնորոշ առանձնահատկություններով, հիմնականում, հանդիսացել են նախնադարյան, համայնական-տոհմատիրական կարգերը, որտեղ իշխել են հասարակական համեմատաբար պարզ հարաբերություններ և վերջիններիս ժամանակ գոյություն ունեցող արտադրողական թույլ զարգացած ուժեր։ Արխայիկ ֆորմացիայի հասարակության այս պայմաններում է, ահա, որ ծաղկել է դիցաբանությունը, գերբնական էակների, ոգիների ու հրեշների անհեթեթ կերպարների միջոցով, ֆանտաստիկ ձևերի մեջ արտացոլելով տիրող պրիմիտիվ հասարակական հարաբերությունները և առաջին հերթին բնության տարերային ուժերը։

Այսպես, օրինակ, խոսելով հունական տոհմերի և հույն դիցաբանության ծագման ժամանակաշրջանի մասին, Մարքսը իր Լ. Մորգանի «Հնադարյան

[1] Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, էջ 270—271։
[2] Նույն տեղում, էջ 271։

հասարակություն» գրքի կոնսպեկտի մեջ հետևյալն է գրում. «...թեև հույներն իրենց տոհմերը բխեցնում են դիցաբանությունից, բայց այդ տոհմերն ավելի հին են, քան հենց նրանց ստեղծած դիցաբանությունն իր աստվածներով ու կիսաստվածներով»[1]։

Նույնը պնդում է նաև Էնգելսը իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գրքում։ Նա գրում է. «...ընդհանրապես ամբողջ հունական դիցաբանությունը առաջացել էր հիտները բերած հին-արիական բնության պաշտամունքից և էական գծերով պայմանավորված էր տոհմերի և ֆրատրիաների գոյությամբ, որոնց մեջ և այդ զարգացումը տեղի էր ունենում»[2]։

Դիցաբանության հետ միասին, մարքսիզմի կլասիկները դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի լույսով՝ լուսավորել են նաև ժողովրդական էպոսի հետ կապված մի քանի կարևոր հարցեր։ Այդ հարցերից առաջինը՝ արվեստի որոշ ձևերի, այդ թվում և էպոսի զարգացման համար անհրաժեշտ յուրահատուկ հասարակական պայմանների հարցն է։

Մարքսի կարծիքով, արվեստի և մասնավորապես էպոսի զարգացման համար, անցյալում հիմք է հանդիսացել մանր արտադրության կլասիկ ձևի, այսպես կոչված, հարաբերական «համաչափությունը»։ Հայտնի է, որ հասարակական-տնտեսական նախակապիտալիստական ֆորմացիաների տիրապետության պայմաններում, համեմատաբար ավելի թույլ են եղել հասարակական արտադրության և մասնավոր յուրացման միջև եղած հակամարտությունները, որոնք հետզհետե զարգանալով բուրժուական հասարակության մեջ, պատճառ են դառնում գեղարվեստական ստեղծագործության, իբրև հասարակական գիտակցության յուրահատուկ ձևի, անկման համար։

Մարքսն այդ առթիվ գրում է. «Գեղարվեստի նկատմամբ հայտնի է, որ նրա ծաղկման որոշ շրջաններն ամենևին չեն համապատասխանում հասարակության ընդհանուր զարգացմանը, հետևաբար նաև նրա նյութական հիմքի զարգացմանը, որը մի տեսակ կազմում է հասարակության կազմակերպության կմախքը։ Օրինակ՝ հույները արդիական ժողովուրդների համեմատությամբ կամ թե Շեքսպիրը։ Գեղարվեստի որոշ ձևերի, օրինակ՝ էպոսի մասին ընդունված է նույնիսկ, որ նրանք երբեք այլևս չեն կարող ստեղծվել համաշխարհային դարաշրջան կազմող իրենց կլասիկ կերպարանքով, հենց որ սկսվեց գեղարվեստական արտադրությունն իբրև այդպիսին, և որ, այդպիսով, հենց գեղարվեստի բնագավառում նրա որոշ խոշոր նշանակություն ունեցող ձևերը հնարավոր են միայն գեղարվեստական զարգացման համեմատաբար անզարգացած աստիճանում»[3]։

Նման հայեցակետ ունենալով գեղարվեստի որոշ ձևերի և էպոսի անհամաչափ զարգացման մասին, Մարքսը գալիս է այն եզրակացության, որ կապիտալիզմի տիրապետության պայմաններում չի կարող ստեղծվել բառիս իսկական իմաստով էպոս, որովհետև՝ «կապիտալիստական արտադրությունը հիշնամաբար է վերաբերվում հոգևոր արտադրության մի քանի ճյուղերին, ինչպիսիք են արվեստն ու պոեզիան»[4]։ Այդ ուղղությամբ 18 և 19-րդ դարերում

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 134։
[2] Նույն տեղում, էջ 137։
[3] Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, էջ 270։
[4] К. Маркс, Теории прибавочной стоимости, том I, Москва, 1952, стр. 247.

կատարված որոշ փորձերը («Հենրիադա» և այլն) Մարքսը իրավացի կերպով համարում է չհաջողված գործեր։

Ժողովրդական էպոսի հետ կապված երկրորդ կարևոր հարցը, որն առաջ է քաշվել մարքսիզմի կլասիկների կողմից, դա հունական արվեստի, այդ թվում և էպոսի չխամրող գեղարվեստականության և դրա հասարակական պատճառների հարցն է, որ սերտորեն առնչվում է արվեստի անհամաչափ զարգացման խնդրի հետ և կազմում է վերջինիս տրամաբանական շարունակությունը։

Ինքը Մարքսը, առաջ քաշելով վերոհիշյալ հարցը, խոստովանել է նրա բարդությունը։ Նա դժվարին խնդիր է համարել այն պատճառների պարզաբանումը, որոնց ուժով անտիկ արվեստն ու էպոսը «դեռ շարունակում են մեզ գեղարվեստական հաճույք պատճառել և որոշ իմաստով պահպանում են նորմայի և անհասանելի տիպարի նշանակություն»[1]։

Մարքսին զբաղեցրել է այն խնդիրը, թե ինչո՞վ է, որ այդ պրիմիտիվ արվեստը, որն անխզելիորեն կապված է այն անզարգացած հասարակական աստիճանի հետ, որից աճել է նա, ունի այնքան հմայք նաև մեզ համար։ Մարքսի կարծիքով այդ հմայքի պատճառը պետք է տեսնել հունական արվեստի ու էպոսի՝ մարդկային հասարակության մանկությունն արտացոլելու փաստի մեջ։ Այդ առթիվ նա գրում է.

«Տղամարդը չի կարող նորից երեխա դառնալ, այլապես տղայամիտ կլինի։ Բայց մի՞թե նրան հրճվանք չի պատճառում մանկան միամտությունը և մի՞թե նա ինքը չպետք է ձգտի մի ավելի բարձր աստիճանի հասնելով՝ իր իսկական էությունը վերարտադրելու։ Մի՞թե յուրաքանչյուր դարաշրջանում մանկան բնության մեջ չի վերակենդանանում մարդու սեփական բնավորությունը՝ իր բնական հշմարտությամբ։ Եվ ինչո՞ւ մարդկային հասարակության մանկությունը այնտեղ, որտեղ զարգացել է ամենից ավելի գեղեցիկ կերպով, չպետք է հավիտենական գրավչություն ունենա մեզ համար իբրև մի այլևս երբեք չկրկնվող աստիճան։ Լինում են անկիրթ երեխաներ և ծերի խելոքություն ունեցող երեխաներ։ Հնադարյան ժողովուրդներից շատերը պատկանում են այդ կատեգորիային։ Հույները նորմալ երեխաներ էին։ Նրանց արվեստի թովչանքը մեզ համար հակասական չէ այն անզարգացած հասարակական աստիճանի նկատմամբ, որից բողբոջել է այն»[2]։

Մարքսիզմի կլասիկների մտքերը դիցաբանության և էպոսի մասին սկզբունքային ուղեցույց են հանդիսանում ֆոլկլորագիտության և ընդհանրապես գրականագիտության համար։ Առանձնակի նշանակություն ունի Մարքսի վերոհիշյալ դրույթը հունական արվեստի ու էպոսի չխամրող գեղեցկության մասին, որը բանալի է տալիս մեզ ճիշտ ըմբռնելու և գնահատելու տարբեր ժողովուրդների բանավոր ստեղծագործության լավագույն հուշարձանները և առաջին հերթին էպոսը, որը ստեղծված լինելով խորը հնադարում, Մարքսի խոսքերով ասած՝ «շարունակում է մեզ գեղարվեստական հաճույք պատճառել»։

Վերնաշենքի հետ կապված մյուս հարցը, որը առաջ է քաշված մարքսիզմ-լենինիզմի կլասիկների և, մասնավորապես, ընկեր Ստալինի կողմից, դա

---

[1] Կ. Մարքս, Տաղարանտեսության քննադատության շուրջը։ էջ 271—272։
[2] Նույն աեղում, էջ 272։

նրա ակտիվ բնույթի հարցն է։ Ենկեր Ստալինը ուսուցանում է, որ «վերնաշենքը հենց նրա համար էլ ստեղծվում է բազիսի կողմից, որպեսզի ծառայի բազիսին, որպեսզի ակտիվորեն օգնի բազիսին ձևավորվելու և ամրապնդվելու, որպեսզի ակտիվորեն պայքարի լիկվիդացնելու հին, իր դարն ապրած բազիսը՝ նրա հին վերնաշենքի հետ միասին»[1]։

Վերնաշենքի ակտիվ բնույթի մասին ստալինյան ուսմունքը կարևոր նշանակություն ունի ժողովրդական բանահյուսության գիտական ուսումնասիրության համար։ Ժողովրդական բանահյուսությունն իբրև վերնաշենքային երևույթ պատմական տարբեր ժամանակաշրջաններում, հասարակական-տնտեսական տարբեր ֆորմացիաների տիրապետության պայմաններում, բազիսի նկատմամբ ունեցել է տարբեր վերաբերմունք։ Անցյալի մասնավոր սեփականատիրական կարգերի տիրապետության պայմաններում, ժողովրդական բանահյուսությունը իր ուժեղ և առաջադիմական մասով՝ ծառայել է տիրող բազիսի քայքայման գործին։

Այս տեսակետից բնորոշ են մի շարք ժողովուրդների էպոսները և, առաջին հերթին, ռուսական էպոսը։ Ստեղծված ու ձևավորված լինելով ֆեոդալական ֆորմացիայում, այդ էպոսները, ի հակակշիռ ֆեոդալիզմին հատուկ մասնատվածության տենդենցի, մարմնավորել են իրենց մեջ հիշյալ ժողովուրդների միասնության ու անկախության գաղափարը, դրանով իսկ նպաստելով ֆեոդալական բազիսի քայքայմանը։

Նույնը կարելի է ասել նաև տարբեր ժողովուրդների հին և միջնադարյան աշխարհիկ հեթանոսական երգերի, հակակրոնական-ռացիոնալիստական առակների, առածների մասին, որոնց մեջ, ի հակակշիռ տիրող ասկետական իդեոլոգիայի և քրիստոնեական դոգմաների, վեր է հանված ու գովերգված է բնությունն ու աշխարհիկ կյանքը, սուր քննադատության ու թունոտ ծաղրի են ենթարկված քրիստոնեական եկեղեցին, նրա սպասավորները և անգամ ինքը աստված։

Վերոհիշյալ և նման կարգի մի շարք ուրիշ ստեղծագործությունների գոյության փաստը ֆեոդալական, կապիտալիստական ֆորմացիաներին հատուկ բազիսների պայմաններում, հետևանք է այն հակասությունների, որ գոյություն են ունեցել այդ ֆորմացիաների սոցիալ-տնտեսական կարգերի մեջ։

Հայտնի է, որ յուրաքանչյուր հասարակության հոգևոր կուլտուրան, որի մեջ մտնում են իդեոլոգիայի տարբեր ձևերը, այդ թվում նաև ժողովրդական բանահյուսությունը, պարունակում է երկու հակադիր և իրարամերժ տենդենցներ, որոնցից մեկը ծառայում է տվյալ բազիսի ամրապնդման գործին, իսկ մյուսը նպաստում է նրա քայքայմանը։

Հայտնի է նաև, որ յուրաքանչյուր անտագոնիստական հասարակակարգի մեջ, առաջուց արդեն ծնունդ են առնում այն ուժերը, որոնք պետք է հանգեցնեն նրան վերջնական կործանման, ուժեր, որոնք մոտեցնում են նոր բազիսի առաջացումը։

Տվյալ հասարակակարգի հակասություններից ծնված առաջավոր, դեմոկրատական գաղափարները, որոնք մարմնավորված են նաև անցյալի ժողովրդական բանահյուսության լավագույն հուշարձանների մեջ, նպաստելով հին բազիսի քայքայմանը, չեն կորչում վերջինիս մահացման հետ միասին։

---

[1] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 13—14։

Իբրև պիտանի հոգևոր արժեքներ նրանք օգտագործվում են նոր վերնաշենքի մեջ։

Բոլորովին այլ դեր է կատարում ժողովրդական բանահյուսությունը սոցիալիստական հասարակակարգի պայմաններում։ Եթե անցյալի մասնավոր սեփականատիրական կարգերի տիրապետության ժամանակ ժողովրդական բանահյուսությունը իր հիմնական մասով ծառայել է տիրող բազիսի քայքայմանը, ապա մեր օրերում այն ամբողջապես կատարում է միանգամայն դրական դեր իր բազիսի համար։ Հանդես գալով իբրև ներգործոն ու մոբիլիզացնող կարևոր մի ուժ, նա կոչ է անում և կազմակերպում է գյուղի ու քաղաքի ժողովրդական լայն մասսաներին՝ պայքարելու սովետական պետության և սոցիալիստական կարգի թշնամիների դեմ, ներշնչում ու դաստիարակում է այդ մասսաներին՝ նորանոր սխրագործություններ կատարելու սոցիալիստական շինարարության տարբեր ու բազմաղան բնագավառներում։

Բնորոշ են այս առումով սովետական հասարակակարգի զանազան էտապներում Միության սոցիալիստական ազգերի կողմից ստեղծված բանահյուսական այլևայլ ժանրի արձակ ու չափածո բազմաթիվ ու բազմազան ստեղծագործությունները (ժողովրդական երգեր, հեքիաթներ, զրույցներ, ասքեր, առածներ, ասացվածքներ և այլն), որոնց մեջ մի կողմից մերկացված, խստորեն քննադատված և թունոտ ծաղրի են ենթարկված մեր երկրի հին ու նոր տարբեր գույնի թշնամիները (կուլակ, վնասարար, ֆաշիստ, ինտերվենտ և այլն), մյուս կողմից՝ վեր են հանված սովետական մարդկանց՝ խաղաղ աշխատանքի բնագավառում և պատերազմի դաշտում կատարած անօրինակ սխրագործությունները՝ հանուն սոցիալիստական հայրենիքի պաշտպանության և նրա հետագա ծաղկման. գովերգված ու փառաբանված են՝ ռևոլուցիայի հանճարներ, սովետական ժողովրդի հաղթանակների ոգեշնչող ու կազմակերպող բոլշևիկյան պարտիայի առաջնորդներ, կոմունիզմի մեծագույն ճարտարապետներ Լենինի և ընկեր Ստալինի հերոսական կյանքն ու գործը։

Սովետական բանահյուսության՝ իբրև վերնաշենքի մեջ մտնող հասարակական գիտակցության ձևերից մեկի վերոհիշյալ ֆունկցիան միանգամայն հասկանալի ու բնական է։ Այն ամբողջապես պայմանավորված է սոցիալիստական բազիսով և հետևանք է այդ բազիսի ոչ անտագոնիստական բնույթի։

2

Բազիսի և վերնաշենքի ստալինյան ուսմունքի մեջ առանձին կարևորություն ունի Ի. Վ. Ստալինի դիտողությունը հասարակական երևույթների սպեցիֆիկ առանձնահատկությունների մասին։ Ըստ այդ դիտողության՝ հասարակական երևույթները, բացի հասարակությանն սպասարկելու իրենց ընդհանուր հատկությունից, «...ունեն իրենց սպեցիֆիկ առանձնահատկությունները, որոնք նրանց տարբերում են միմյանցից և որոնք ամենից ավելի կարևոր են գիտության համար»[1]։

Մյուս վերնաշենքային երևույթների և մասնավորապես գրականության ու արվեստի հետ ունեցած իր ընդհանուր կողմերի հետ մեկտեղ, ժողովրդական բանահյուսությունը ունի նաև իր սպեցիֆիկ առանձնահատկությունները, որով

[1] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 82։

նա տարբերվում է հասարակական գիտակցության ուրիշ ձևերից, այդ թվում նաև գրականությունից ու արվեստից։

Ժողովրդական բանահյուսության առաջին և ամենակարևոր սպեցիֆիկ առանձնահատկությունն այն է, որ նա դեռևս նախասովետական պայմաններում արտահայտել է հասարակության ենթող մեծամասնության՝ աշխատավորական մասսաների մտքերն ու զգացմունքները և արտացոլել է հասարակության նյութական զարգացման պահանջները։ Դարերի ընթացքում ժողովրդական բանահյուսությունը ծառայել է հասարակության առաջավոր ուժերի շահերին, հեշտացրել է հասարակության զարգացումը, նրա ընթացքը գեպի առաջ։

«Հին հեքիաթների, առասպելների, լեգենդների հիմնական իմաստը,— նկատել է Գորկին,— հանգում է հին աշխատող մարդկանց ձգտմանը՝ թեթևացնել իրենց աշխատանքը, բարձրացնել նրա արդյունավորությունը, զինվել չորքոտանի և երկոտանի թշնամիների դեմ»[1]։

Առասպելների ու զրույցների, հեքիաթների ու վեպերի, երգերի ու վիպերգերի, առածների ու ասացվածքների մեջ աշխատավոր ժողովուրդը դրսևորել է իր ոգևորումները բնության տարերային ուժերի հաղթահարման ուղղությամբ, պատմել է իր պայքարի մասին՝ սոցիալական բռնությունների, ճնշման ու շահագործման դեմ, ստեղծել է հերոսների մի ամբողջ բանակ, որոնք աչքի են ընկել իրենց անձնական ու հասարակական մի շարք հատկություններով ու ձգտումներով, իրենց՝ խիզախությամբ, դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով, աշխատասիրությամբ, հայրենասիրությամբ ու խաղաղասիրությամբ։

Ճիշտ է, ժողովրդական բանահյուսություն ստեղծողների աշխարհայացքը ազատ չի եղել անխուսափելի պատմական սահմանափակությունից և դասակարգային նախապաշարումներից։ Նրանք ավելի կամ պակաս չափով տուրք են տվել տիրապետող դասակարգի գաղափարախոսությանը։ Սակայն, այդ նախապաշարումները ժողովրդական բանահյուսության գաղափարական բովանդակության մեջ միայն տարրեր են և ոչ ամենևին որոշող հանգամանք։ Բնորոշն ու հիմնականը այստեղ այն է, որ ժողովրդական բանահյուսության ստեղծողներին, Լենինի խոսքերով ասած, հաջողվել է դուրս գալ շահագործող փոքրամասնության ստրկությունից, արտացոլել իրենց ստեղծագործության մեջ «ներքնախավերի» պատմական փորձը, արտահայտել շահագործվող մեծամասնության տրամադրությունները՝ կապված ժամանակի կարևորագույն հարցերի հետ։

Այդ է պատճառը, ահա, որ ժողովրդական բանահյուսության լավագույն հուշարձանները վերապրում են իրենց հորինման ժամանակաշրջանը և ունեն չխամրող, մնայուն նշանակություն։ Գրականության ու արվեստի դասական երկերի նման և, նրանց հետ միասին, այդ հուշարձանները մտնում են համաշխարհային կուլտուրայի գանձարանը, կազմելով նրա կարևոր բաժիններից մեկը։ Ավելին, ժողովրդական բանահյուսության շատ հուշարձաններ կրում են իրենց մեջ այնպիսի տարրեր, որոնք նրանց կենսունակ են դարձնում նաև այսօրվա համար, այնպիսի հատկություններ, որով նրանք վեր են ածվում սոցիալական և կուլտուրական ներգործոն մի ուժի նաև մեր ժամանակի աշխատավորական մասսաների համար։

---

1 Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 276։

Պերճախոս է այս տեսակետից վերջին տասնամյակի ընթացքում Սովետական Միության մի շարք ժողովուրդների հերոսական էպոսների («Սասունցի Դավիթ», «Կալեվալա» և այլն) հոբելյանների տոնակատարության վաստը, իբրև ժողովրդական բանահյուսության լավագույն հուշարձանների կենսունակության վառ ապացույց։ Ժողովրդական էպոսի մեջ արծարծված առողջ ու առաջավոր գաղափարների և այդ գաղափարներն անձնավորող հերոսների չխամրող ուժի և արդիականության փայլուն օրինակ կարող է ծառայել «Սասունցի Դավիթ»-ը, որի՝ ժողովրդի վառ երևակայության ու լայն սրտի մեջ անթառամ պահպանված սքանչելի կերպարը Հայրենական Մեծ պատերազմի ահեղ օրերին, ինքնաբերաբար, դարձավ հայ մարտիկների հայրենասիրությունը, անձնազոհությունն ու խիզախությունը բորբոքելու և նրանց այդ հատկությունները բնութագրելու միջոցներից մեկը։

Ժողովրդական բանահյուսության երկրորդ կարևոր սպեցիֆիկ առանձնահատկությունը՝ հեքիաթների, էպոսի, երգերի մեջ վառ կերպով արտացոլված մասսաների տարերային մատերիալիստական աշխարհայացքի նշաններն են և վերջինիս հետ սերտորեն կապված նույն այդ մասսաների առողջ օպտիմիզմը։

Այն ժամանակ, երբ կղերա-ֆեոդալական և բուրժուական գրականության մեջ դարեր շարունակ այն միտքն է քարոզվել, թե պետք է համակերպվել տիրող իրականության հետ և ապրել հանդերձյալ կյանքի իր հիմքում իդեալիստական հավատով, մի քարող, որը բխել է տիրապետող դասակարգի շահերից՝ մասսաներին կաշկանդված վիճակում պահելու և նրանց անխնա կերպով հարստահարելու համար, ժողովուրդն իր բանավոր ստեղծագործության մեջ, հավատարիմ իր հասարակական առողջ բնազդին, միշտ շեշտը դրել է պայքարելու անհրաժեշտության վրա, երազել է լավագույն ապագայի մասին և հավատացել է «բարու» հաղթանակին։

Ժողովրդական բանահյուսության այդ բնորոշ գիծը, մարքս-լենինյան ուսմունքի՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դիրքերից սքանչելի կերպով բացահայտված է Գորկու մի շարք ասույթների մեջ։

«Նախնական կուլտուրայի պատմաբանները բոլորովին լռության են մատնել այն մատերիալիստական մտածողության միանգամայն պարզ նշանները, որն անխուսափելիորեն ծնունդ էր առնում աշխատանքի պրոցեսներից և հին մարդկանց սոցիալական կյանքի երևույթների ամբողջ գումարից։ Այդ նշանները մեզ հասել են հեքիաթների ու առասպելների ձևով, որոնց մեջ մենք լսում ենք կենդանիներին ընտելացնելու, բուժիչ խոտերի հայտնագործման, աշխատանքի գործիքների գյուտարարության արձագանքները»[1],— գրում է Գորկին մի տեղ։

«Շատ կարևոր է մատնանշել, որ ֆոլկլորին կատարելապես խորթ է հոռետեսությունը, չնայած այն փաստին, որ ֆոլկլորը ստեղծողները ծանր կյանք են վարել և նրանց տանջալից ստրկական աշխատանքը իմաստազուրկ են դարձրել շահագործողները, իսկ անձնական կյանքը եղել է իրավազուրկ ու անպաշտպան։ Սակայն, չնայած այդ բոլորին, կոլեկտիվին հատուկ է եղել

---

[1] Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, էջ 273։

անմահության գիտակցությունը և այն համոզմունքը, թե ինքը կհաղթի իրեն թշնամի բոլոր ուժերին»[1]— գրում է Գորկին մի ուրիշ անգամ։

Չբավարարվելով լոկ տեսական ընդհանրացումներով, Գորկին իր դրույթներն ամեն անգամ հաստատել ու հիմնավորել է համապատասխան վաստակաշատ մատերիալով։ Այսպես, խոսելով հեքիաթների և առասպելների մեջ արտահայտված աշխատավորական մասսաների մատերիալիստական մտածողության նշանների մասին, նա ասում է. «Արդեն ամենահին ժամանակներում մարդիկ երազում էին օդում թռչելու հնարավորության մասին. այդ են վկայում մեզ Ֆաեթոնի, Դեդալի և նրա որդի Իկարի առասպելները, ինչպես և «ինքնաթիռ գորգի» հեքիաթը։ Երազում էին երկրի վրա երթևեկությունն արագացնելու մասին՝ «արագագնաց կոշիկների» հեքիաթը, և յուրացրին ձին. գետով նրա հոսանքից ավելի արագ լողալու ցանկությունը հանգեցրեց թիերի և առագաստների գյուտին. թշնամուն ու գազանին հեռվից սպանելու ձգտումը դրդապատճառ հանդիսացավ պարսատիկի, նետի ու աղեղի հայտնագործմանը։ Մտածում էին մի գիշերվա մեջ մանել ու գործել հսկայական քանակությամբ կտորեղեն, երազում էին մի գիշերվա մեջ լավ բնակարան, նույնիսկ «պալատ», այսինքն՝ թշնամու դեմ ամրացված մի բնակարան կառուցելու հնարավորության մասին, և ստեղծեցին ճախարակը, աշխատանքի այդ ամենահին գործիքներից մեկը, պրիմիտիվ ձևերի դազգահ՝ գործելու համար, և ստեղծեցին Վասիլիսա Գերիմաստունի հեքիաթը։ Կարելի է բերել մի քանի տասնյակ ապացույցներ ևս՝ հաստատելու համար հին հեքիաթների ու դիցաբանությունների նպատակասլացությունը, տասնյակ ապացույցներ՝ հաստատելու համար նախնական մարդկանց պատկերավոր, հիպոթետիկ, սակայն արդեն՝ տեխնոլոգիկ մտածելակերպի հեռատեսությունը, մի մտածելակերպ, որն արդեն բարձրացել է մեզ ժամանակակից այնպիսի հիպոթեզների աստիճանին, ինչպիսին է իր առանցքի շուրջը երկրի պտտվելու ուժի օգտագործումը կամ բևեռային սառույցների ոչնչացումը»[2]։

Անդրադառնալով ժողովրդական բանահյուսության մեջ իր ցայտուն արտացոլումը գտած աշխատավորական մասսաների լավատեսության հարցին, Գորկին գրում է. «Ֆոլկլորի հերոս «հիմարը», որին արհամարհում են նույնիսկ հայրն ու եղբայրները, միշտ ավելի խելոք է դուրս եկել, միշտ հաղթել է կյանքի բոլոր արհավիրքներն այնպես, ինչպես հաղթում է դրանք նաև Վասիլիսա Գերիմաստունը»[3]։

Ժողովրդական բանահյուսության սպեցիֆիկ երրորդ առանձնահատկությունը՝ նրա ծագումով անհատական, բնույթով կոլեկտիվ ստեղծագործություն լինելու հանգամանքն է։

Ի տարբերություն գրական երկերի, որոնք և՛ ծագումով, և՛ բնույթով անհատական ստեղծագործություններ են և իբրև այդպիսիք կրում են իրենց վրա մեկ անհատ հեղինակի տաղանդի կնիքը միայն, ժողովրդական բանահյուսության հուշարձանները ծագելով անհատ ստեղծագործողներից, ժամանակի ընթացքում անցնում են ժողովրդական գուսանների ու վիպասանների մի քանի սերունդների ստեղծագործական բովով և կրում են իրենց վրա կոլեկտիվ հանճարի դրոշմը։ Իր այդ առանձնահատկության շնորհիվ ժողովրդական բանահյուսու-

[1] Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, էջ 284։
[2] Նույն տեղում, էջ 275—276։
[3] Նույն տեղում, էջ 284։

թյունը հասարակական կյանքի երևույթները վերարտադրում է ճշմարտացի, բազմակողմանի ու խորը կերպով։ Նույն այդ հանգամանքն է հանդիսանում նաև ժողովրդական բանահյուսության գեղարվեստական ներգործման հսկայական ուժի հիմնական աղբյուրը։ Գորկու կարծիքով «Կոլեկտիվ ստեղծագործության հզորությունը ամենից ավելի վառ կերով ապացուցվում է նրանով, որ հարյուրավոր դարերի ընթացքում անհատական ստեղծագործությունը չի ծնել «Իլիականին» կամ «Կալեվալային» հավասար որևէ բան, և որ անհատական հանճարը չի տվել ոչ մի ընդհանրացում, որի արմատում ընկած չլիներ ժողովրդական ստեղծագործությունը, ոչ մի համաշխարհային տիպ, որն առաջուց գոյություն չունենար ժողովրդական հեքիաթների և լեգենդների մեջ»։

Նույն Գորկու կարծիքով «Միայն կոլեկտիվի հսկայական ուժով է հնարավոր բացատրել առասպելի ու էպոսի մինչև օրս էլ չգերազանցված խորը գեղեցկությունը... Միայն ամբողջ ժողովրդի միաձույլ մտածողության պայմաններում հնարավոր է ստեղծել այնպիսի լայն ընդհանրացումներ, հանճարեղ սիմվոլներ, ինչպիսիք են Պրոմեթևսը, Սատանան, Հերկուլեսը, Սվյատագորը, Իլյան, Միկուլան և ժողովրդի կենսական փորձի հարյուրավոր այլ հսկայական ընդհանրացումներ»[1]։

Ժողովրդական բանահյուսության չորրորդ սպեցիֆիկ առանձնահատկությունը՝ նրա սերտ կապն է արվեստի մի քանի ճյուղերի հետ, նրա, այսպես կոչված, սինկրետիկ բնույթը։

Ժողովրդական բանահյուսության մի շարք ստեղծագործություններ, ինչպիսիք են, օրինակ՝ ժողովրդական ղրման և կատակերգությունը, ծիսական երգերը (աշխատանքի, հարսանեկան, թաղման և այլն), որոնք կուգակցվում են դրամատիզացիայի ենթարկված զանազան ծեսերի, իրենց որոշ կողմերով (միմիկա, ժեստ, դրամատիկական գործողություն) մտնում են բեմական արվեստի բնագավառը։ Երաժշտական արվեստի և պարարվեստի հետ են սերտորեն աղերսվում ժողովրդական բանահյուսության այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են, օրինակ՝ ժողովրդական երգերի տարբեր ու բազմազան տեսակները (խմբերգեր, պարերգեր և այլն), վիպական երգերը, էպոսը և այլն։

Ժողովրդական բանահյուսության առանձին ժանրերի ու ստեղծագործությունների մեջ առկա սինկրետիզմի վերոհիշյալ տարրերը գալիս են նախնադարյան համայնական հասարակությունից և կապված են հին մարդկանց, այսպես կոչված, սինկրետիկ իդեոլոգիայի հետ, որի մեջ մտնում էին փիլիսոփայությունը, գիտությունը, արվեստը և այլն։

Բանավոր ստեղծագործությունը կամ խոսքի արվեստը հանդիսացել է նախնադարյան սինկրետիկ իդեոլոգիայի ամենացայտուն արտահայտությունը։ Նրա մեջ մտնող աշխատանքի և ծիսական երգերը, հեքիաթներն ու առասպելները կրելով զգայական-պատկերավոր բնույթ, արտացոլել են հին մարդկանց գիտելիքները շրջապատի իրականության վերաբերյալ, դրսևորել նրանց ողջ կենսափորձը, նրանց պրակտիկ իմաստությունը։

Ծիսական երգերը, օրինակ, որոնք կատարվում էին հարսանեկան և թաղման հանդեսների ժամանակ, երկրագործական աշխատանքների միջոցին և այլն, իրենց բնույթով մոգական ստեղծագործություններ էին։ Նրանց միջոցով

[1] Сб. М. Горький. Статьи 1905—1616 гг., изд. „Парус", 1916, стр. 9—19.

նախնադարյան մարդիկ ձգտում էին ներգործել բնության վրա — վերջինիս ուժերը սեփական շահերին ծառայեցնելու նպատակով։

Հեքիաթներն ու առասպելները արտացոլում էին բույսերի ու կենդանիների պաշտամունքի հետ կապված նախնական ֆանտաստիկ պատկերացումները։ Նրանց մեջ բանաստեղծական ընդհանրացման էին ենթարկվում հին մարդկանց գիտելիքները երկրագործության և առողջապահության վերաբերյալ։

Նույնը կարելի է ասել նաև խոսքի արվեստի մյուս ստեղծագործությունների (աղոթք, հանելուկ, կենդանական զրույց և այլն) վերաբերյալ։

Նախնադարյան հասարակության բանարվեստի վերոհիշյալ ձևերի զգալի մասը զուգակցվել է երգ-երաժշտության և պար-շարժումների հետ, գտնվելով անբաժանելի միասնության մեջ վերջիններիս հետ։ Իրև կյանքի պատկերավոր ընդհանրացումներ, այդ ստեղծագործությունները, ունենալով գեղարվեստական բնույթ, միաժամանակ հանդիսացել են ժամանակի գիտության, կրոնի, տեխնիկական գիտելիքների և այլն արտահայտությունը։

Տոհմային հասարակության քայքայման հետ տեղի է ունենում և սինկրետիկ իդեոլոգիայի քայքայումը։ Հասարակության հետագա դիֆերենցիացիայի հետևանքով, սինկրետիկ իդեոլոգիայից անջատվում են արվեստի առանձին ճյուղերը, խոսքի արվեստը դառնում է պրոֆեսիոնալ ստեղծագործողների զբաղմունքի առարկա։

Սակայն, ժողովրդական բանահյուսության մեջ, ի տարբերություն գրականության և արվեստի, մինչև վերջն էլ, ավելի կամ պակաս չափով, պահպանվում են հնագույն սինկրետիկ արվեստի որոշ տարրերը, կազմելով նրա սպեցիֆիկ առանձնահատկություններից մեկը։

Ժողովրդական բանահյուսության սպեցիֆիկ առանձնահատկություններից մեկն էլ բանավոր ստեղծագործություն լինելու և տրադիցիայի հետ սերտ կապ ունենալու հանգամանքն է։ Հնարավորություն չունենալով գրով դրոշմելու իր կյանքի տարեգրությունը, ժողովուրդը դրա փոխարեն ստիպված է եղել բանավոր կերպով մշակել հատուկ արտահայտչական միջոցներ, որոնց օգնությամբ նա սերունդների հիշողության մեջ դարից դար կարողացել է վառ պահել իր լավագույն տրադիցիաները։

Բանավոր ստեղծագործության մեջ անհամեմատ ավելի, քան գրականության ու արվեստի բնագավառում նշանակություն ունի դարերով կուտակված գեղարվեստական և սոցիալական փորձը հաջորդ սերունդներին հաղորդելու հանգամանքը։ Ժողովրդական բանահյուսությունը հարազատությամբ և ռեալիստական ճշմարտացիությամբ արտացոլում է տվյալ ազգի ողջ կենսագրությունը. նրա էթնիկ ձևավորման պրոցեսը, ապրած աշխարհագրական միջավայրը, պատմական կյանքում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական կարևորագույն իրադարձությունները, լեզուն և հոգեկան կերտվածքի առանձնահատուկ գծերը։

Ժողովրդական բանահյուսության մեջ հասած հնագույն հուշարձանները (առասպել, երգ, առած և այլն) անգնահատելի նյութ են տալիս առաջին հերթին «դեռևս խորը հնադարում, նախքան ստրկության դարաշրջանը» սաղմնավորված ժամանակակից լեզվի նախնական վիճակի ուսումնասիրության համար։ Այդ ստեղծագործությունները պետք է արժանան բանասերների և մասնավորապես լեզվաբանների հատուկ ուշադրությանը, քանի որ դրանք լեզվի հնագույն վիճակը արտացոլող եզակի աղբյուրներ են։ Այդ հուշարձանների

լեզվի՝ բառապաշարի ու քերականական կառուցվածքի մանրազնին քննությունը մեծապես կօգնի որոշելու այն հարցը, թե ինչ է ներկայացրել իրենից տվյալ ժողովրդի լեզուն մինչև գրականության լեզու դառնալը։ Իսկ դա չափազանց կարևոր է նրա կրած հետագա փոփոխությունները պարզելու համար։

Լեզվի հետ միասին ժողովրդական բանահյուսությունը տրադիցիայի շնորհիվ հիանալի կերպով պահպանել և անդադար նորոգել է նաև ժողովրդի պատմական կյանքի ու նրա բնավորության բոլոր էական կողմերը և, հատկապես, նրա ազատասիրությունն ու հայրենասիրությունը։ Բանահյուսական լավագույն հուշարձանները և, մասնավորապես, հերոսական էպոսը միշտ եղել են տվյալ ժողովրդի բնավորության հիշյալ գծերի ցայտուն արտահայտությունը։

Սրանք են ահա ժողովրդական բանահյուսության, իբրև հասարակական գիտակցության ձևերից մեկի, հիմնական սպեցիֆիկ գծերը, որոնց շնորհիվ նա ուրույն տեղ է գրավում մյուս վերնաշենքային երևույթների մեջ։

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության նշանակությունը ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության համար չի սահմանափակվում միայն առաջ քաշված հարցերի շրջանակով։ Այդ հարցերը բավական շատ են ու բազմազան։ Դրանց մանրազնին ու խորը ուսումնասիրությունը ժողովրդական բանահյուսության վերաբերյալ սովետական գիտության առաջնահերթ խնդիրն է։